ղնցեալ լուրեանց , որք ոչ կործանեսցին եւ մի բնակեսցի
ոք 'ի մէնջ 'ի նոսա եւ վկայեմ վկայիւք ։ Եւ ապա եբաց
նմա Սոփրոնիոս զդուռն քաղաքին և եմուտ Օմար 'ի ներքս
ինքն և ընկերք իւր ընդ նմա , եւ բազմեցաւ 'ի գաւթի
տաճարին Ս · Յարութեան · եւ 'ի մերձենալ պահու աղօ-
թիցն , ասէ Պատրիարգն՝ ով իշխան ժողովրդեան , կաց
յաղօթս 'ի տեղւոջդ յորում կաս , եւ նա ասէ՝ ոչ կացից
յաղօթս 'ի տեղւոջ յայսմիկ , և եհան զնա յեկեղեցին Կոս-
տանդիանոսի , եւ արկ նմա փսիաթ 'ի մէջ եկեղեցւոյն ·
ասէ Օմար և ոչ աստանօր կացից յաղօթս , եւ ել Օմար
յաստիճանն յայն որ 'ի վերայ դրան եկեղեցւոյն Կոստան-
դիանոսի , եկաց յաղօթս միայնակ 'ի վերայ աստիճանին ,
և ապա բազմեալ ասէ ցՍոփրոնիոս · իմանա՛ս ով Պատրի-
արգ՝ թէ ընդէ՛ր ոչ կացի յաղօթս 'ի ներքս եկեղեցւոյդ ,
և նա ասէ՝ ոչ · ասէ՝ եթէ կացեալ էր իմ յաղօթս անդ ,
կորուսանէիր զայն , զի յետ անցման իմոյ տիրէին Տաճիկք
այնմ ասելով թէ աստանօր յաղօթս եկաց Օմար ։ Այլ մա-
տո ինձ քարտէզ և գրեցից յետկար մուրհակի · և գրեաց
թէ · Մի՛ ոք 'ի Տաճկաց յաղօթս կացցէ 'ի վերայ աստիճա-
նին այնորիկ , բայց եթէ մի զկնի միոյ , և մի ժողովեսցին
անդ համախումբ կալ յաղօթս , եւ մի եզան կարդասցեն
'ի վերայ · եւ զայս թուղթ ետ ցՊատրիարգն ։ Եւ ապա
ասէ Օմար թէ արդարեւ իրաւունս կալայ 'ի վերայ քո ,
ուրեմն տուր ինձ տեղի ինչ՝ զի շինեցից 'ի նմա զմզկիթն ·
և նա ասէ · ցուցից քեզ տեղի շինել մզկիթ , յորմէ ձեռըն-
թափ եղեն թագաւորք Հռովմայեցւոց 'ի շինել զնա , եւ
նա է վէմն յորոյ վերայ խօսեցաւ Աստուած ընդ Յակո-
բայ և անուանեաց զնա Յակոբ դուռն երկնից , եւ որ-
դիքն Իսրայէլի կոչեցին զնա Սրբութիւն Սրբոց , և եղեւ
Տաճար որդւոցն Իսրայէլի , և մեծարեալ յարգեն զնա , և
ուր ուրեք յաղօթս կային՝ ունէին զդէմս իւրեանց 'ի նա ։
Բանզի որպէս գրեն Պատմիչք թէ Հռոմայեցիք՝ յորժամ ըն-
կալան զհաւատս Քրիստոսի · և Հեղինէ մայր Կոստանդիա-
նոսի շինեաց զեկեղեցիս յԵրուսաղէմ քաղաքի , տեղի վիմին
և շուրջանակի նորա գոլով աւերակ , այնպէս 'ի բաց թողաւ ,
և արկին հող 'ի վերայ վիմին՝ մինչև կուտեցաւ աղբիւս մեծ ·
և յիրաւի թողին լքին զնա Հռոմայեցիք և ոչ մեծարե-